



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3634

82
n. - 63

1904

20 Oct. 2005

1904. № 1176.

82

п. - 63

Փոյս. Յով. Խարապետանի.



ԵՐԵՎԱՆ ՄՈԳԵՐ

(Ումլէսից)

Արտադրութեան հայոց

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՈՒՑԵԼՈՒ
Բանական Խոր
ՀՀՀՀ


գիրն է 10 ԿՈՊ.



ԹԻՖԼԻՍ 1904.

Տպարան „ՀԵՐԱԿՈՒՄ“, Միքայելան փող., 81.

(7)



28 JUN 2005

(52)

(арм-к
3277

Փախ. Յով. Կարապետեանի.

82
Pi-63

ԵՐԵՒՔ ՄՈԳԵՐ

(Աւալեսից)

Արտաստան. «Ալբինից»



Տիպ. „ГЕРМЕСЪ“ С. Назарянца, Михайл. пр. № 81.
Թ Բ Ֆ Լ Ի Ս 1 9 0 4

27.08.2013

3634

Дозволено цензурою, Тифлисъ, 10-го Мая 1904 г.

50471-шн



36001-66 /

1572. 98



ԵՐԵՔ ՄՈԳԵՐԸ *

Պաղեստինի հարաւային Զերել-
Զուբրեխի լեռնաշղթան, որի երկա-
րութիւնն է մօտ 50 մղոն, այնքան
նեղ է, որ իր հիանալի գաղաթնե-
րի եղբազծերով յիշեցնում է հա-
րաւից հիւսիս սողացող մի թըր-
թուրի. Կանգնելով նրանց ժայ-
ռերի վրայ, երեսը դէպ արևելք
գարձրած, կը տեսնէք ձեր առաջ
տարածւած արարական մերկ ա-
նապատը, որտեղ թազաւորում են
մշտական Արևելեան քամիները:
Զերել-Զուբրեխի այն փեշերը, ինչ
ուղղութիւնով հոսում է եփրատը, ծածկւած է խիտ աւագով.
այդ լեռնաշղթան միակ պաշտպանն է Ամոնացոց և Մովաբացոց
արօտատեղիների, որոնք տարածւում են դէպի արևմուտք:

Հարաւային Հրէաստանի իւրաքանչիւր տեղը Արարը կնքել
է իր անուններով: Ալեոր Զերելը, նրա լեզով—պէտ է այն
բոլոր ջրանցքներին, որոնք սկիզբ առնելով նրանից, կտրում,
անցնում են նախկին հոռվմէական ճանապարհը և որի վրայով
մինչև այժմս էլ ուղղենորւում են Մերքը զնացողները: Ջրանցք-
ները ճանապարհից հեռանալով, քանի գնում այնքան խորանում

*) Ուալէսի յայտնի «Բեն-Հուր» վէպից:

են. Նոքա անձրեներից դարձել են հեղեղների մի մի ծորակներ, որոնք համում են մինչև Յորդանան: Հէնց այդ ջրանցքներից մէկում, հեռուից երեաց մի ճանապարհորդ, որ գնում էր անապատի սարահարթի կողմը: Նա մօտ 40 տարեկան էր, լայն ալեխառն մօրուքով, սև դէմքով, խոշոր և սև աչքերով, հագած արեկենեան լայն և արձակ շորեր: Նա արագ առաջ էր գնում հեծած սպիտակ ուղարի վրայ, որը օրօրում էր անապատում այսպէս, ինչպէս մակոցկը ծովի ալիքների վրայ:

Առաւոտ էր: Արեկելքից ծագեց արել: Ճանապարհորդի առաջ փռւած էր լայն և մերկ անապատը: Սկզբում այստեղ և այստեղ նրան պատահում էին մոխրագոյն մանր փխրուն քարեր, ուղտի խոտ և փոքրիկ մացաներ, բայց հետզհետէ նրանք էլ կորան:

Աչքի առաջից անհետացան ճանապարհի հետքերը և նրա առաջ տարածւեց միայն աւազ և աւազ: Ուղտը երբեմն կամաց, երբեմն արագ, գլուխը բարձրացնելով դէպի հորիզօն, առաւոտեան թարմ օղը ծծելով, հանդարտ առաջ էր գնում: Անապատի փոքրիկ թռչունները և արտուտիկները ճախրում էին նրա շուրջը: Հեռուից երբեմն աղեւէսը կամ բորենին տեսնելով նրանց, կանդ էին առնում, բարձրացնում գլուխները, և շտապով փախչում ճանապարհից հեռնւ, որ հեռուից կարողանան նայել իրանց անդրութիւնը խանգարողների վրայ: Աջ կողմում երեսում էր Զեքելը, որի ժայռերի վրայ սաւանում էր գիշատիչ արծիւը: Ճանապարհորդը աչքերը հեռուն դէպ անապատը սևեռած, ոչինչ չէր նկատում: Նա և ուղտը կարծես առաջնորդութունը էին մի աներեւոյթ ուժով: Այսպէս, մինչև կէս օրը, ուղտը օրօրւերով առաջ էր գնում անապատում: Ուղիղ կէս, օրին կարծես իր կամքով, կանդ առաւ, աղերասլի մի ձայն արձակեց, որը աւելի հառաչանքի էր նման քան ձայնի, որով ուղտերը իմաց են տալիս իրանց յոդնածութեան մասին: Խորհրդաւոր ճանապարհորդը նայեց արկին, ապա չորս կողմը, կարծես ուղտում էր համոզւել—արդէօք ցանկացած տեղն է հասուել թէ ոչ: Նա մըմնջաց մի փոքր աղօթք, ապա նրա բերանից լսեց ուղտին չոքեցնելու սովորական մի ձայն «Եխ, Եխ, Եխ», և ուղտը չոքեց:

Զը նայելով որ անապատը առիւծների, վագրերի բորենիների և այլ գիշատիչ կենդանիների որջէ, այնուամենայնիւ ճանապարհորդը չէր վերցրել իր հետ ոչ մի զէնք: Գա պէտք էր վերագրել կամ նրա խաղաղ բնաւորութեան կամ նրա արտակարգ քաջութեան: Նա սաստիկ յոդնել էր: Իշներով ուղտի վրայից, արագ ման էր գալիս՝ ձեռները շփելով, միայն երբեմն կանգ առնելով, ձեռը դնում էր ճակատի վրայ և նայում հեռնւն դէպ հորիզոն, կարծես սպասում էր այնտեղից մէկի երեալուն, կամ իր ընկերներին, որոնց հետ երկի առաջուց խօսք էր կապած հանդիպել անապատի այդ կէտում: Զը նայելով, որ նա անհանգիստ էր, այնուամենայնիւ իր յոյսը չէր կտրում: Վերցնելով սպանողը նա ջրով սրբեց ուղտի աչքերը ու երեսը, աղա ցած բերեց եղեգների մի կապոց, մի երկար ձող ցցեց գետնի մէջ, եղեգները թեքեց դէպի փայտը, յետոյ մի շորի կտոր քաշեց նոցա վերայ, և մի փառաւոր շարժական վրան ստացաւ, որ պակաս չէր շէլիսերի վրանից: Ցած բերեց գորգի մի կտոր, ծածկեց վրանի դուռը, ապա մի անգամ էլ նայեց չորս կողմը հեռնւն և հեռնւն, բայց նրա աչքերին երեաց միայն հեռուում վագող բորենին, ճախրող արծիւը, անապատը և կապոյտ երկինքը: Յետոյ դառնալով ուղտին՝ ասաց: «Մենք շատ հեռու ենք մեր տանից, իմ արագավազ կենդանի, շնտ և շատ հեռու, բայց Աստուած մեզ հետ է, լինենք համբերող»: Տուղրակը կախեց ուղտի վզից որ կերակրուի, յետ դարձաւ և նորից նայեց հեռուն—«Կը զան, խօսեց հանդարտ, նա որ ինձ առաջնորդում էր, կառաջնորդի և նրանց պէտք է պատրաստել»: Պայուսակի սիջից հանեց գինի, միս, «Ել-Շիլիմեան» թուզ, որ բունում է Արաբիայում, պանիր և հաց: Բաժանեց երեք մասի և պատրաստեց սեղանը-վրանի մէջ: Ամեն ինչ պատրաստ էր: Նա նորից դուրս եկաւ և նայեց հեռուն: «Բայց ինչ է նա... արեկելքում երեսում է մի ուրիշական»... ասաց նա և կարծես մեխւեց աւեղն ու տեղը, աչքերը լայնացրած, զարմացած նայում էր հեռուն: Ուրեականը քանի գալիս մօտենալով մեծանում էր: Քիչ յետոյ ճանապարհորդը պարզ տեսնում էր իր ուղտի երկուորեակը, հսդկական պատգարակով, որը գործածւում էր միայն հնդկաստանում: Նորեկը տեսնելով սպի-

տակ ուղարին և նրա տիրոջը — եզիպտացուն, ալրադ առաջ Եկաւ, իջաւ ուղարից և ողջունեց, ասելով «ողջոյն ձեզ»:
— Նոյնը և ձեզ, իմ հաւատակից Եղբայր, խաղաղութիւն եւ ողջոյն. պատասխանեց եզիպտացին:
Եկւորը անզէն, բարձրահասակ, փոս ընկած աչքերով, ալեշիառն մորուքով, պղնձագոյն երեսով մի հնդկացի էր,
— Միայն Տէրն է ամենակարող գոչեց հնդկացին:
— Օրհնեալ լինին նրա ծառայողները, պատասխանեց եզիպտացին:

— Նայիր, աւելացրեց նա, ահա և մի ուրիշն է գալիս:
Երկուսն էլ նայեացքները ուզգեցին դէպ հիւսիս, որտեղից,
պարզ կերպով կարելի էր տեսնել առաջ եկող մի սպիտակ
ուզտ:

Նոքա կանգնած սպասեցին միւնոյն տեղում, մինչև որ նոր եկողը մօտեցաւ:

—Ողջոյն ձեզ, եղբայրք իմ—ասաց նա գրկախառնւելով
նրանց հետ:

—Թող լինի Տիրոջ կամքը — պատասխանեցին նրան։
Վերջինս ոչ մէկին էլ նման չէր. մօտ 50 տարեկան, գոյնը
սպիտակ, բարակ իրանով, փայլուն, գանգուր, սև մազերով և
գեղեցիկ դէմքով մի առոյգ մարդ էր։ Սա էլ անզէն էր։ Դէմ-
քից երևում էր, որ եթէ ոչ ինքը, գոնէ նրա նախնիքը առաջ
են եկել Աթէնական խիտ անտառներից։

—Առաջինը ես եմ եկել այստեղ, ասաց եղիպտացին. ուստի իրաւունք եմ համարում ծառայել իմ եղբայրներին. վրանը սփած է, հացը պատրաստ, ուրեմն թոյլ տեքք պարտքս կատարեմ: Բռնելով նոցա ձեռներից տարաւ վրան, հանեց նրանց անդախները, լւաց նրանց ոտները, սրբեց և ցոյց տւեց իւրանչիւրի տեղը: Ապա լւաց իր ձեռները և ասաց. «այժմ հոգանենք մեր մասին, եղբարք, սկսենք ուտել և ամրապնդւենք. լուելու ժամանակ կը ծանօթանանք մօտիկից միմեանց հետ, իմանանք թէ ամեն մէկս որտեղից է գալիս, ովքեր ենք և նշալէս է մեր անունները»: Եղիպտացին նստացրեց նրանց միւսանց հանդէպ, խաչեցին ձեռները կրծքի վրայ, աղօթեցին սկսեցին ուտել:

Մեղանից շատ հեռու, արևմուտքում, կայ մի երկիր, որի
անունը երբէք չի մոռացւի, որովհետեւ ամբողջ աշխարհը պար-
տական է նրան անվճար պարտքով:

Ոչ մի գործադարձ վարձատրութիւն չի կարող լինել այն
բանին, որը տալիս է մեզ հոգեկան ամենամեծ վայելչութիւն։
Ես չեմ խօսի ոչ գիտութեան, ոչ փիլիսոփայութեան, ոչ գե-
ղափոսութեան, ոչ բանաստեղծութեան և ոչ էլ ուսումնական ար-
ևեստի մասին։ Այն փառքը որ միշտ պիտի փայլի այդ երկրի
վրայ գա նրա գրականութեան կատարելագործութիւնն է։ Այդ
գրականութեան միջոցով աշխարհը ճանաչեց նրան որին մենք
վնարում ենք։ Այդ երկիրը Յունաստանն է։ Ես Աթէնացի Կղեն-
թոսի որդին եմ, իս անունն է Գանգարի։

Իմ հայրենակիցներս ամբողջօվին նւիրւեցին գիտութեան, ես էլ հետևեցի նրանց։ Այնպէս պատահեց որ ամենահանճարաւոր փիլիսոփաներից երկուսը քարոզեցին—մէկը հոգւոյ մասին, որ նա գոյութիւն ունի ամեն մարդու մէջ և նա անմահ է, իսկ միւսը—ճշմարիտ Աստուծոյ մասին։ Այն բոլոր խնդիրներից, որ առաջ էր գալիս փիլիսոփաների վիճելուց, ես կանգ առայ այդ երկու փիլիսոփայութեան վրայ, ինչպէս ուշադրութեան արժանի հարցեր։ և արժէր ժամանակ կորցնել այդ հարցերի

համար, որովհետև ես մտածում էի որ կազ կայ Աստուծոյ և ճողույթ մէջ և որը մինչև այժմ յայտնի չէ մարդկանց։ Եւ այդ ճանապարհով մարդու միտքը կարող է այնքան եղբակացութիւններ անել, մինչև որ կը հանդիպի մի ամուր անանցնելի մտաւոր պատճենի, որի առաջ կանգ կառնի և օգնութեան կը կանչի։ Ես օգնութիւն էի կանչում, բայց ոչ ոք ինձ չոգնեց այդ պատճենից, յուսահասուեցի, թողի մարդկանց, կորցըի իմ բոլոր յարաբերութիւնները քաղաքների և այդ վէճերի հետ և հեռացայ։

Իմ հայրենիքի հիւսիսային մասում կայ մի սար, որ յայտնի էր մեզ իբրև աստածների հանգստարան։ Դա Օլիմպոսն է, Ես քաշւեցի այնտեղ և բլուբներից մէկում գտայ մի քարանձաւ, տեղափոխւեցի այնտեղ և սկսեցի ապրել մտածմունքների տարւելով։ Իմ ամբողջ էռութեամբ սպասում էի մի մաքի պարզւելուն, այսինքն ինձ տանջող հարցերի վճռւելուն, հաւատալով որ մի օր կը սուանամ գոցա պատասխանը, և ահա պատասխանը ստացայ։ Մէկ օր, քարանձաւիս դռնից, որ տանում էր դէպի Թերմէսեան ծովը, ափում, ես աեսայ մի մարդու, որը գուրս ձգւած լինելով նաւից, լողում էր դէպի ափ։ Ես ընդունեցի նրան և հոգս քաշեցի նրա մասին։

Բանից երևաց, որ նա երայեցի է և քաջ ծանօթ երրայական պատմութեան և օրէնքներին։ Նրանից իմացայ, որ այն Աստածը որին ես որոնում եմ, կայ, գոյութիւն ունի, որ նա շատ հնուց առաջնորդում էր նրանց և օրէնքներ էր առել։ Դա ինձ համար զիւտ էր, որին ես ծարաւ էի։ Իմ հաւատը իզուր չէր։ Աստած ինձ պատասխանեց, ես գտայ ձշմարիտ Աստծուն։ Այդ մարդը պատմեց ինձ, որ Աստեած երևացել է նրանց մարդարէներին, խօսել է նրանց հետ և խօստացել է աշխարհ գտայ նա թւեց այդ մարդարէների անունները, յիշեց նրանց խօսքերը սուրբ գրքերից, և ասաց, որ Աստծունց գալուստը մօտ է և երուսաղէմում՝ օրի վրա սպասում են Մեսիայի երևալուն։

Ուղիղ է, թէև այդ մարդը ասում էր, որ կոստացեալը պէտք է գայ միայն հրէաների համար, որովհետեւ և նա որը պիտի գայ, գալու է որ թագաւորի իսրայէլացիների վրայ»։ Բայց

ես բացականչեցի—միթէ մնացած աշխարհի համար ոչինչ բաժին չը կայ։ «Ո՛չ պատասխանեց նա—մենք ենք նրա ընտրեալ ժողովուրդը»։ Բայց բացասական պատասխանը չը թուլացրեց իմ հաւատքը, թէ ինչու Աստուած կը սահմանափակի իր ողորմութիւնը և սէրը միայն մի ժողովրդի շնորհել և սկսեցի մտածել։ Վերջապէս ես համոզւեցի, որ այդ ժողովուրդը ընտրւած է ծառայելու նրան և պահպանելու հաւատը, որ աշխարհը նոյա միջոցով ճանաչի ճշմարտութիւնը և փրկւի։

Երբ հրէան գնաց, ես մնացի մենակի Ակսեցի միշտ ալզօթել և խնդրել Մեսիային, որ երբ նա աշխարհ գայ, օգնի ինձ տեսնելու իրան։ Մի անգամ, գիշերը, երբ ես նստած քարանձաւի դրան պոաջ, նորից ուզեցի թափանցել իմ զոյութեան գաղտնիքների մէջ, ձգառում էի իմանալ այն, ինչ միայն Աստծուն է յայտնի, յանկարծ տեսայ հեռուն, երկնքի վրայ, մթութեան մէջ, փայլիղ մի լուսաւոր աստղ, որը դանդաղ առաջ էր գալիս։ Նա մօտեցաւ բլուրներին և կանգնեց ուզիղ իմ քարանձաւի դէմ, այնպէս որ նրա ամբողջ լոյսը ընկաւ երեսիս։ Ես գետին ընկայ և քնեցի։ Երազիս մէջ լսեցի մի ձայն, որ ասում էր— «Դասպար, քո հաւատը քեզ փրկեց։ օրէնքալ լինես դու այն երկու անձնաւորութիւնների հետ, որոնք գալիս են երկրի հակառակ կողմերից՝ դու կը աեսնես Մեսիային և վկայ կը լինես նրա գոյութեան։ Վեր կաց և առաւտեան ճանապարհ ընկիր, հաւատացիր սուրբ հոգուն որը քեզ կառաջնորդի»։ Առաւտեան վերլացայ հողեպէս բոլորովին բարեփոխւած։ Վայր ձգեցի անապատային շորերս, հագայ առաջւանը և հանեցի, թագցրած տեղիցս ունեցած փողերս, Զայն տւի մօտիկից անցնող նաւին, ինձ ընդունեցին նաւի վրայ և դուրս բերին Անտիոքի ափը, որտեղ ես գնեցի այս սպիտակ ուղարք, կարևոր սարքերը և անցայ ամբողջ կմզէսը, Դամասկոսը, Բոստրան և Ֆիլադելֆիայի վրայով հասայ այստեղ։ Ահա, եղայրներ, իմ պատմութիւնը։ Այժմ թոյլ տւէք լսել ձերը»։

Եղիպատացին և Հնդկացին լուսնայեցին միմեանց և առաջինը ձեռի նշանով հրաւիրեց երկրորդին պատմել իր մասին։ Նա էլ սկսեց։

«Մեր եղբայրը լաւ խօսեց. չը գիտեմ արդեօք ես էլ պիտի կարողանամ այնպէս պատմել»: Նա կանգ առաւ, մի քիչ մտածեց և ապա մկնեց. «Եղբայրներ, իմ անունս է Մելքոն. Ես ձեզ կը պատմեմ եթէ ոչ ամենահին, գոնէ ամենաառաջին գրաւոր լեզով, այն է Սանսկրիտերէն: Ծննդով հնդիկ եմ. իմ ազգը առաջինն էր, որ մշակեց գիտութեան դաշտը, ցանեց և զարդարեց նրան. ինչպէս էլ լինի մարդկութեան ապագան, մեր վեգաները չեն կորչի, որովհետև նոքա աղբիւր են օգտակար գիտութիւնների և հաւատի: Վեղանների գիրքը բաժանւում է երեքի Ռւպա-Վեհա—մեկնութիւն Բրամի, որ խօսում է բժշկականութեան, գեղարւեստի, ճարտարապետութեան, երաժշտութեան, նետաձգութեան, 64 մեքենական արւեստների և Վեղի-Անգի—սրբութիւնների մեկնութիւն, որ նւիրւած է աստղաբաշխութեան, քերականութեան, կախարդութեան, թալիսմանների և ծիսակատարութեան:

Ուզ-Անգի, որ գրել է իմաստուն Վիասան, իր մէջ պարունակում է աշխարհագրութեան, տիեզերագրութեան, ժամանակագրութեան մասին. նրա մէջ է և Ռումանան և Մահարաշտա-հերոսական պոէմաները, որ նկարագրում են աստածների և կիսաստածների ծագումը: Այդպէս են նաև մեծ Շաստրաները, որ գրած են սրբազն ներշնչումով: Ինձ համար այդ բոլորը այժմ գոյութիւն չունեն, բայց նոքա կը մնան յաւիտեան իբրև յիշատակ մի հանճարաւոր աղգի. նոքա առաջադիմութեան գրաւականներ են: Բայց դուք երեխ կը հարցնէք, որ եթէ այդպէս է, ուրեմն ինչո՞ւ չի երևում այդ յառաջադիմութեան գրաւականների հետևանքը: Աւազ, կասեմ ձեզ, որ նոյն այդ գըրքերը արգելք եղան մեր աղգի կատարելագործութեան. պատճառ, որ իբր թէ մեղ սաեղծողը հոգացել է ամեն ինչի մասին և այդ գրքերի մեկնիչները առաջ բերեն այն օրհասական սկըզբ-մունքը, թէ մարդ չը պիտի ձգաի ոչ գիւտեր անելու և ոչ նոր բաներ հնարելու, սաելով, որ երկինքը արդէն ամեն ինչով հոգացել է մարդկանց մասին: Երբ այդ տեսակ մեկնութիւնները սրբազն օրէնք հրատարակեցան, հնդկական հանճարի լուսատուն հորը զլորւեց, որտեղից մինչև այժմ նա լուսաւորում է միայն նրա նեղ շրջապատը և դառը ջուրը:

Եղբայրներ, մեր Շաստրաները սովորոցնում էին բարձրենին. Ասառուծոյ մասին, որ անսւանւում է Բարամ. իսկ Աւպի-Անգի-պարանները կամ սրբազն պոէմաները խօսում էին բարեգործութեան մասին և թէ իմ եղբայրը թոյլ կը տայ, դառնալով յոյնին ասաց նա, և ես կաւելացնեմ, որ խօսում էին աւելի երկու գլխաւոր իդէաների—այն է Աստծու և հոգու մասին: Արդէն շատ երկար տարիներից սկսած՝ հնդկական ամբողջ լաւ ուժերի ուշադրութիւնը գրաւուած էր այդ հարցերով:

Աւանդութիւնը Բրամային հաշւում է մեր ցեղի նախահայրը, որը իր ատեղծագործութիւնով մարդկանց բաժանեց գաւակարգի: Առաջ նաև հասաւատեց տարտարոսը՝ երկրի անդունդը և երկինքը: Յետոյ երկիրը յարմարեցրեց երկրային ոգիներին ընակեցնելու համար: Նրա շրթունքներից ծագեց բրամինական դասակարգը, որը ամենից աւելի նման է նրան իր ազնւութիւնով, հոգու բարձրութիւնով, որը միակն է բոլոր դասակարգերի մէջ և նրանց միայն թոլապրւած է ուսումնասիրելու վեղան, որը արտասանելու է նրանց շրթունքներից և պարունակում է իր մէջ բոլոր օգտակար գիտութիւնները: Յետոյ Բրամանի ձեռքերից ծագեցին համար կամ հովիւները, երկրագործները և վաճառականները, իսկ ոտներից՝ ի նշան ցածր ծագումի, առաջ եկան սիդրաները կամ ստրուկները, որոնց վիճակւած էր աշխատել միւս դասակարգերի մարդկանց համար՝ իբրև ծառաներ, երկրագործական մշակներ, բանտորներ և արհեստաւորներ: Եւ տեսէք, որ օրէնքը խիստ արգելում էր մի դասակարգից անցնել միւսը: Մէկը խիստելով իր դասակարգի օրէնքը, նա գուրս էր մնում բոլոր դասակարգերից, դառնում էր օտար բոլորի համար և կարող էր յարաբերութիւն ունենալ միայն իրա պէս դասակարգերից գուրս եկածների հետ—թշւառականների, որոնց ոչ մի դասակարգ չէր ընդունի իր մէջ:

Ես ծնւեցի բրամին. իմ ամբողջ կեանքս, մինչև իմ վերջին գոյութիւնս, մինչև մահս պէտք է ընթանայի նախնիքներիս թողած օրէնքներով: Իմ առաջին կիրակրի կուլ տալը, ինձ անուն տալը, առաջին արև տեսնելս, երեք անգամ մէջքս թելով փաթաթելը, որ նշան էր իմ վերածնելուն, առաջին աստիճան ստանալս, այս բոլորը կատարւում էր առանձին ծիսակատա-

ըութիւններով։ Ես չեմ կարող նչ ուտել, նչ խմել, և քնել, վախենալով խախտել մեր դասակարգի յավատենական օրէնքները։ Ո՞հ եղայրներ, որքան իմ հոգին տանջւել է... պէտք էր ամեն մի քայլափոխում զգոյշ լինել, որովհետեւ իմ վարքի, կառ օրէնքների պահելուց էր կախւած երկնքի որ մասում անդաս փոխւելու ներքին կամ ինդրայի, թէ բարձր կամ Բրամայի, կամ դարձեալ երկրի վրայ մնալու, որպէս զի այնտեղ սկսելով ճիճուի կեանքից՝ անցնեմ, աստիճանաբար, ճանճի, ձկան, և մնացած կենդանիների կեանքով։ Բրամայի բոլոր օրէնքները պահելու ամար իբրև պարզե համարւում էր Բրամայի հետ միանալը, որը սովորական էակ չէր։ Բրամինի դասակարգին պատկանող այն մասը, որը իրան նւիրում էր գիտութիւններին, պատկանում էր առաջի կարգին։ Երբ ես անցայ առաջին կարգից երկրորդը, այն է ամուսնացայ և եղայ տանտէր, սկսեցի կասկածել ամեն ինչի մասին, մինչև անգամ Բրամայի մասին։ ուրեմն ես դարձայ հերետիկոս և կարծէք հորը գլուրւած լոյսի վայլ տեսայ վերեւում-երկնքում ու ձգուեցի իմանալ թէ արդեօք որտեղից է լոյսը երեւում և փայլում։ Վերջապէս, երկար տարիների ճիշգից յետոյ, ես տեսայ և ճանաչեցի ճշմորիտ լոյսը և հասկացայ՝ թէ ի՞նչ է ճշմարիտ կեանքի սկիզբը, իւրաքանչիւր հաւատաքի դարրը և այն օղակը, որ Աստծուն միացնում է հոգու հետ, դա սէրն է։ Միայն գործունեայ սէրն է, որ տալիս է մարդուն բախտաւորութիւն և նրա գեղեցկութիւնը կայանում է ամբողջապէս ուրիշն ծառայելու ձգտման մէջ։ Ճանաչելով այդ ճշմարտութիւնը, ես արդէն բրամին չէի կարող մնալ։ Բրաման աշխարհը լցրել էր անարդարութիւններով։ Ես չը կարողանար տանել այդ բոլորը, հեռացայ Լագոր կղզին, որը գտնւում է Գանգէս գետի Հաղկական ովկիանոս թափւելու գետաբերանում։ Այստեղ իմաստուն կապելի յիշատակին կանգնեցրած տաճարի պատերի տակ, իմ աղօթքները խառնելով նրան աշխարհաների աղօթքների հետ, որոնց այդ իմաստունի յիշատակը հաւաքել էր միատեղ, ուզում էր հանգատութիւն գտնել։

Տարին երկու անգամ այնտեղ գալիս էին Հնդիկ ուխտաւորները սուրբ Գանգէսի ջրերի մէջ լողանալու։ իմ սէրը դէզ

այդ թշւառները քանի գնում աւելանում էր, ցանկանում է խօսել նրանց հետ, բայց անսակելի ճիպ էի անում լոելու, որովհետեւ մի խօսք Բրամայի, երորդութեան և Շաստրայի մասին և ես կորած էի։

Մի փոքրիկ կարեկցութիւն, դասակարգերից արտաքսւածներին, որոնց ես հաճախ տեսնում էի թափառելիս, որոնցից շատերին վիճակւած էր մեռնել թափառելով, ով գիտէ որտեղ, որ անապատի տաք աւազի վրայ։ բաւական էր մի բաժակ ջուր տալ նոցանից մէկին, որ ես էլ դառնայի այն թափառաշնչներից մէկը, զրկւէի ընտանիքից, տանից, տեղից, բարեկամներից, իրաւունքից և դասակարգից գուրս նետւէի։ Բայց սէրը յաղթեց ինձ։ Ես սկսեցի խօսել սկզբից տաճարում աշակերտների հետ, նոքա ինձ գուրս քշեցին տաճարից։ Փորձեցի բարողել ճանապարհների վրայ, ունկնդիրներս փախչում էին կամ յարձակւում ինձ վրայ։ Վերջապէս, ամբողջ Հնդկաստանում չեղաւ մի անկիւն, որ ես կարողանայի հանգստութիւն գտնել և ապահով լինէր իմ կեանքը։ Ես օթևան չէի կարող գտնել, մինչև անգամ դասակարգերից գննուած թափառաշրջիկների մէջ, որովհետեւ թէև նրանք դասակարգերից գուրս էին, բայց դարձեալ հաւատում էին Բրաման։ Փնտուում էի մենակութիւն, որտեղ կարողանայի իմ մտածմունքներովս թագնւել բուրից։ Ես բռնեցի Դանդէսի հոսանքը և հասայ մինչև նրա ակունքը—Հիմալայեան լեռները։ Երբ հասայ Հիւրդվարիան, այնտեղ, որտեղ Գանգէսի ջուրը գլորւելով է հոսում, հեռու իմ ժողովրդից, ես աղօթում էի նրա համար, և ինձ համար, որ վերջապէս գտայ միայնութեան մի տեղ։ Անցնելով նեղ ձորերով, ժայռերի սառնամանիքների վրայով, լեռների մօտով որոնց գագաթները կարծես աստղերին էր կպած, վերջապէս հասայ Լանգ-Տաօ գեղանի լճի ափերին, որը հանգչում է երեք հսկայ լեռների գոգում, որոնց կատարները պսակւած է սպիտակ ձիան սաւանով։ Այդ լեռներն են Տիաէ-Գանգու, Դէ, Գուլու, Տէ-Կայլաս-Պառի, Այստեղը ինդայի, Գանգէսի և Բրահմապուդրայի ակունքները, մարդկային այս օրօրանը, որտեղից մարդկութիւնը ցրւեց աշխարհի ամեն կողմը, թողնելով այնտեղ յի-

շատակ Բալկա քաղաքը, գրաւում է իմաստունին, հալածւածին խօստանալով նրան մենակութիւն, և ապահովութիւն:

Ես սկսեցի ապրել այնտեղ միայնակ աղօթելով և պատպահելով սպասում էի մահւանս:

Մէկ անդամ գիշերը, լճի անխօս ափերին ման գալիս, ես լոռութեան մէջ օգնութիւն էի կանչում. «Երբ կը գաս ձշարտութիւն, Երբ կառնես, ով Տէր, սարկիդ հոգին, սիթէ ինձ չը կայ թողութիւն», յանկարծ, այս խօսքերիս վրայ, լճի ջրի մակերեսոյթի վրայ մի լոյս երևաց, նայեցի վերե, վայլում էր մի պայծառ աստղ. նա առաջ էր գալիս հանդարտ դէպ իմ կողմը, և վերջապէս կանգ առաւ իմ գլխի վերե: Ես զարմացայ նրա արտասովոր վայլին, ընկայ գետին և լեցի հետևեալ ձայնը «Քո սէրը յաղթեց, օրհնած լինիս Հոգիաստանի որդի. քաւութիւնը հեռու չէ, երկու ուրիշ օտարների հետ, որոնք կը գան երկրի ուրիշ ծայրերից, որու կը տեսնես Փրկչին և վկայ կը լինես նրա աշխարհ գալուն: Վեր կաց առաւօտեան և գնա նրանց հանդէպ, հաւասացիր ո. հոգուն, նա քեզ կառաջնորդի»: Այս օրից այդ լոյսը ինձ չէր թողնում, ես նրա մէջ տեսայ աներեոյթ հոգու երևալը: Առաւօտեան վերադարձայ իմ թողած աշխարհը: Ճանապարհն իռանք քերծում մի թանկագին ակ գտայ, և ծախեցի Հիւրդարեամ. անցներով կագուրը, կարուլը, եղդան հասայ Սպահան, այնտեղ մի սպիտակ ուղար գնեցի և չը սպասելով քարաւաններին, հասայ Բաղդադ: Ճանապարհորդում էի մենակ, ոչ մի վտանգից չը վախենալով և ահա, եղբայրներ, մենք պատահեցինք այստեղ և այժմ գնում ենք տեսնելու Փրկչին խօսելու և նրան ծառայելու: Այսպէս, ես վերջացրի իմ պատմութիւն:

IV

Եղիպտացին երկար լոելուց յետոյ, ծանր սկսեց. Եղբայր, դու շատ չարշարւել ես և ես ուրախ եմ քո յաղթութեան. Եթէ թոյլ կտաք, այժմ ես կը պատմեմ Ձեզ, թէ ես ինչպէս եմ կոչ լամած:

Զեզանից ամեն մէկը պատմեց իր հայրենիքի մասին, թոյլ տւէք ինձ ևս սկսել նրանից: Ես եղիպտացի եմ. իմ անունն է

Բաղդապար: Իմ աղգը զանազաննեում է միւսներից շատ յատկութիւններով, բայց ես կը խօսեմ միայն մէկի մասին. Պատմութիւնը սկսում է մեզանով. մենք առաջին աղգն էնք, որ սկսեցինք անցքերը գրել հետևաբար, այնպէս, որ մենք չունենք բերանացի պատմութիւն, այլ մենք տւել ենք իրականութիւնը գրաւոր, պալատների և տաճարների ճակատի, կոթողների, գերեզմանների վրայ: Դրել ենք թագաւորների գործքերը, անունների, փափուկ պապիրուսին ենք հաւատացել մեր փիլիսոփաների, իմաստութիւնները և մեր հաւատի գաղանիքները, բայց մէկից, որը ես ձեզ այժմ կը պատմեմ: Աւելի առաջ վեդից, Պարա-հրասից, Ուալ-Անգից, իմ Մելքոն, աւելի առաջ Հոմերից, բնազանց Պլատոնից, իմ սիրելի Գասպար, աւելի հին չինացոց գրքերից և նրանց թագաւորներից, Մայի գեղեցիկ որդի Միգարտից, Մովսէսի Հոգամատեանից, ամենից հին է մեր Մենէս թագաւորի մասին գրածանքը: Ասա Գասպար, ով է ելլագայի գրողի ուսուցիչները: Շնորհիւ այդ հին գրւածքների մենք իմացանք, որ մեր նախահայրերը եկել են արևելքից, երեք մենք իմացանք, որ մեր նախահայրերը, հին իրանից, որի մասին խօսքազան գետերի ակունքներից, հին գրւածքներից, Մելքոնը: Նրանք այնտեղից բերին ալտեղ պատմութիւնը մինչև ջրհեղեղը և ջրհեղեղի նկարագրութիւնը, նրանք սովորեցրին ճշմարիտ Աստծու և հոգու մասին, որ նա անմահ է: Եթէ մեզ յաջողուի գլուխ բերել այն, ինչու համար այժմ կոչւած ենք, ես կը հրաւիրեմ ձեզ մեր երկիրը և ցոյց կը տամ մեր քրմերի սրբազն գրադարանները, կը հրաւիրեմ ձեր ուշագրութիւնը մեռածների գրքերի վրայ, որոնցից կարելի է իմանալ, թէ ինչպէս մարմինը մեռնելուց յետոյ, հոգուն վիճակւած է թափառել յաւիտեան: Հոգու անմահութեան միտքը ծագած է Միզրայիմի մէջ, գեռ անապատում չը թափառած ժամանակ և ներմուծւած, է այդ միտքը նեղասի շրջակայ ժողովրդի մէջ:

Ազգերի տիրապետութեան մշտական փոփոխութիւնը, այլակերպեց Միզրայիմի հին կրօնը:

Մեր արձանագրութիւնները ասում են, որ Միզրայիմի ժամանակ նեղուսին տիրել էին եթովպացիները, հարուստ և երեակայութիւնով վաս մի ժողովուրդ, որ ցրւած էր ամբողջ Ափրիկայում: Բանաստեղծ Պարսիկները ասուածացրին արևին

որին փոխարինում էր երկրում Օրմուզիլը։ Հեռաւոր Արևելքի կրօնասէր որդիքը իրանց համար աստածներ էին շինում փայտից և փոստիքից։ Միայն եթովպացիները, չը գիտենալով ոչ գիր և ոչ մեքենական մի արհեստ, որ կուռք շինեն, իրանց կարիքը լրացնում էին կենդանիներին, թուչուններին սողուններին պաշտելով և բաւականանում էին դրանով։ Օրինակ, կատուն նւիրւած էր ՌԵ Աստծուն, եզր—Իզեղային, բգեզը—Պատային։ Երկար մաքառումներից յետոյ, այդ կոպիտ կրօնը եղաւ նրանց թագաւորութեան սկիզբ։ Ակսեցին արձաններ կանգնեցնել, որոնցից շատերը, մինչև այժմ կանգուն կան Նեղոսի ափերին և անապատում։ Կոթողները, լաբիրնթումները, պերամիտները, թագաւորների գերեզմանները խառն շինեցին կոկորդիլոսների գերեզմանների հետ։ Ահա թէ ինչ սոտրութեան հասան Արիացոյ որդիքը։ Բայց նոքա բոլորովին չը մոռացան Աստծուն։ Առաջ ես ասացի, որ մենք պապիրուսին հաւատում էինք մեր կրօնքի բոլոր գաղտնիքները, բացի մէկից։ Այժմ կը խօսեմ այդ մէկի մասին։ Մի ժամանակ մեզ վրայ թագաւորում էր փարաւոններից մէկը, որը սիրում էր փոփոխութիւններ, նորմուծութիւններ, որպէս զի նոր, մի բոլորովին նոր սիստեմ՝ ստցնել երկրում, հինը բոլորովին դուրս քշելով։

Այն ժամանակ Հրէաները ստրուկ էին մեզ մօտ: Նոցա
կրօնքը հալածում էր. և երբ այդ հալածանքը անտանելի եղաւ,
նոքա ազատւեցին: մի հրաշով, որը մարդկանց ուղեղից երեէք
չի ջնջւի: Ես խօսում եմ արձանագրութիւններից: Հրէաներից
մէկը, Մովսէս անունով, գնաց պալատ, խնդրեց աստծու անունով
փարաւոնից, թոյլ տալ իր ազգին, թողնել այդ երկրից հեռանա-
լու: Փարաւոնը մերժեց, բայց նոքա փախան: Փարաւոնը ըն-
կաւ նոցա յետեկից և խեղուեց ծովում: Ժամանակակից քուր-
մերը գրեցին այդ անցքը, ես այժմ գտել եմ այդ գաղանիքը, որը
գրւած չէ ոչ մի արձանագրութեան մէջ:

Այդ գժբախտ փարաւոնից յետոյ, իմ հալրենիքում, կրօնը բաժանեց երկուսի. մէկը դարձաւ մամնաւոր, իսկ միւսը հասարակական: Նա, որ ճանաչում էր շատ ապաւածների՝ դա ժողովուրդն էր. իսկ միակ աստծուն հաւատացողը՝ քուրմերն էին, որ ծածկում էին ճշմարտութիւնը ժողովրդից: Երկար

ժամանակ այդ ճշմարտութիւնը համբերատար մնում էր ծածուկ. քուրմերը աշխատում էին ծածկել բոլորովին, բայց ճշմարտութիւնը ի հարկէ երբէք չի թագնւել. նա նման է մի սերմի, որ սպասում է յարմար ժամանակի որպէս զի ծլի. Ահա ես ինքս այդ դասակարգիցնեմ, ես ինքս քուրմ եմ, ճնշած եմ Ալէքսանդրիայում, կրթութիւն ստացել եմ կոչմանս համեմատ. Ես շատ շուտով հիամթափւեցի մեր կրօնից. որի հիմնաքարը այն էր, որ թէ բարի և թէ չար մարդկանց հոգիները, մահից յետոյ, տեղափոխում են ստորին կենդանիների մէջ, որպէս զի աստիճանաբար կատարելագործւելով, համնեն ամենաբարձր կատարելութեան, որքան մարդուս բնաւորութեան յատուկ է. երբ ես լսեցի պարսից կրօնի «Լոյսի» թագաւորութեան և արքայութեան մասին, որտեղ նոցա կարծիքով կարելի է մտնել միայն անցնելով այն կամուրջը, որի վրայով կարող են անցնել միայն արդարները, ես սկսեցի մտածել: Մաքերը ոչ թէ ցերեկը, այլ նոյն իսկ գիշերը, հանգիստ չէին տալիս ինձ: Ես սկսեցի համեմատել հոգու կենդանիների մէջ յաւիտեան թափառելու իդէան, երկնքի յաւիտենական կեանքի իդէայի հետ և ասում էի ինքս ինձ. Եթէ Աստուած արդարադատէ, ինչչէս ինձ սովորեցրել են, ինչու բարին չի ջոկում չարից: Վերջապէս, ես պարզ հասկացայ մաքուր կրօնի այն ճշմարտութիւնը, որ մահը մի մոլորեցնող շաւիդ է, որի առաջ կանգ են առնում և յետ դառնում արատաւոր մարդիկ. իսկ հաւատացողները հասնում են բարձր կեանքի — ոչ թէ նւիրական ներւանի միջոցով, այլ գործունիայ կեանքով, ճշմարտութեան միջոցով: Իմ այս գիւտից մէկ հարց ծագեց իմ մէջ. ինչու ճշմարտութիւնը պիտի թագնւի բոլորից և միայն քուրմերի նպատակներին ծառայի: Պատճառներ այժմ ինձ համար գոյութիւն չուներ: Ժամանակը փոխւել էր, Ռամզէսի օրերը անցել էին, Եգիպտասում թագաւորում էր Հռովմի շրջանը: Ալէքսանդրիայի մարդաշատ թաղերից մէկում, սկսեցի իմ առաջին քարոզները, արևելքից և արևմուտքից դալիս էին ունկըն-գիրներս. ուսանողները գրադարան գնալու ժամանակ, քուրմերը, թափառաշրջիկները, հարուստները, աղքատները, բոլորը հաւաքւում էին շուրջու: Ես խօսում է աստծու, հոգու, չարի և բարիի, ճշմարտութեան, սովորթեան, բարեգործների հատուց-



БИБЛИОТЕКА
МИСТИКА
МУЗЫКАЛЬНОГО
Института
Науки
СССР

ման մասին: Դու, եղբայր Մելքոն, հալածւեցար քարերով, իսկ իմ ունկընդիրներս սկզբում լսելիս զարմանում, իսկ ապա ծիծաղում էին: Նորից փորձեցի խօսել, բայց խօսքեր էին նետում հասցէիս, ծաղրում էին ինձ և քարոզներիս: Ես յաջողութիւն չունեցայ: Երկար ժամանակ որոնում էի իմ անյաջողութեան պատճառը, վերջապէս գտայ: Գետի հոսանքով, մի օրւայ ճանապարհի վրայ, գանւում էր մի գիւղ, որի բնակիչները հովիւներ և այգեպահներ էին: Մակոյկ նստեցի և լողացի նրանց մօտ: Երեկոյեան հաւաքեցի ժողովրդին և սկսեցի քարոզել՝ ինչ քարոզում էի քաղաքում: Այստեղ ինձ չէին ծաղրում: Հեանեալ երեկոյեան նորից, սկսեցի խօսել, նոքա հաւատացին և ուրախացան: այնպէս որ շուտով իմ համբաւը տարածւեց շրջակայքում: Երրորդ ժողովումից յետոյ ժողովուրդը արդէն պատրաստ էր աղօթք անելու: Վերադարձայ քաղաք. լողում էի մակոյկով գետի վրայով: Գիշեր էր: Երկինքը աստղալից և կարծէք երբէք այդպէս պարզ չեն փայտել աստղերը ինչպէս այդ գիշեր: Մակոյկով լողալով, ինքս ինձ մտածում էի, ևս հասայ այն եղբակացութեան որ ով ուզում է վերափոխել կեանքը, չը պէտք է սկսի իր քարոզները պալատներից և հարուստներից, այլ պէտք է զնալ նրանց մօտ, որոնց գւարճութեան բաժակը դատարկէ, այն է թշւառների և արհամարւածների մօտ: Վերադարձնալով քաղաք, ամենից առաջ աշխատեցի իմ կարողութիւնը ահնպէս կարգադրել, որ նրանից ստացածը կարողանար միայն ինձ ապրեցնել: Այդ օրից սկսեցի թափառել նեղոսի հոսանքով գէպի վեր և ցած, մտնելով գիւղերը, ամեն ցեղերի մօտ, որ բնակւում էին շրջակայքում, քարոզում էի ճշմարտութեան մասին: Բայց մի միտք ինձ շատ անհանդատացնում էր. ինչ կը լինի իմ աշխատանքի հետևանքը, միթէ նա պէտք է անհետանայ ինձ հետ: Դրա համար ես մտածում էի լաւ չի լինի արդեօք իմ գործը պատկել մի կազմակերպութիւնով: որպէս զի ոչինչ թագցրած չը լինեմ ձեզանից, կասեմ ձեզ, որ ես փորձեցի մինչև տնգամ գլուխ բերել իմ այդ միտքը, բայց ինձ չը յաջողուեց: Եղբայրներ, աշխարհը այնպիսի մի դրութեան մէջ է, որ վերանորոգիչը պէտք է աստւածային ձիբը ունենայ, որպէս զի կարողանայ յեղաշրջել մարդկանց: Եթէ նա գայ Աստծու անունով, գա դեռ բաւական


չէ, նա այդ կոչման ապացոյցներ պիտի ունենայ: Հարկաւոր է որ նա մեզ ցոյց տայ այն, ինչու մասին կը խօսի մարդկանց հետ. մարդկանց խելքերը այնպէս զրաւուած է միֆով (առասպելականութիւն) այնպէս նոցա ուղեղում արմատացած է նա, որ հեղաշրջելու համար պէտք է հալածւել թողնելով իր հետքում արիւնոտ գիծ: Ես ուզում եմ ասել, որ նորադարձները աւելի մարդ չը պէտք է քանդել նրան. այժմ ճշմարտութիւնը պիտի մարդ չը պէտք է աշխարհ գայ: Ես հասկացայ թէ իներեայ, նա ինքը պէտք է աշխարհ գայ: Ես հասկացայ նաև համարդաշնորհ կարողանայ հաւատաքը ես չունէի աստւածային ձիբք, իմ կասկածը գործիս ապագայի մասին ինձ շատ տիրեցնում էր: Ես հաւատում եմ աղօթքին. մասին ինձ շատ մարդկանցները փոխեցի այնտեղ, ձեզ նման թողնելով մեծ ճանապարհները միայն մենակութիւնը և որտեղ չը կային մարդիկ և որտեղ միայն մենակութիւնը և լուսութիւնն է թագաւորում: Հեռանալով Աֆրիկայի անյայտ լուսութիւնն է մէկում, Նեղոսի հոսանքով, հինգերորդ ջրվէժից և խորշերից մէկում, Թալիս-Էլ-Աբիադում, այնտեղ սկսեցի գետի խառնարանից վերև, Թալիս-Էլ-Աբիադում, այնտեղ սկսեցի գետի մտածել և աղօթել: Այստեղ կայ մի լեռ, երբ նա առաւօսիշտ մտածել և աղօթել: Այստեղ կայ մի լեռ, երբ նա առաւօսիշտ մտածել և աղօթել: Կերակրուում էի արմատմբող արարի լեռը ինձ ապաստանեց: Կերակրուում էի զալիս լճի և նինիների պտուղով: Մէկ անգամ, գիշերը, ման էի զալիս լճի մտածելով, որ Երբ մօտ գտնւած արմատենիների անտառի մէջ մտածելով, որ Երբ պէտք է տեսնեմ մարդկանց գործը: Հայելանման լճի մակերեսութիւնը պայլիլում էր սատղերի ցոլքից: Յոլքերից մէկը ինձ լոյթը փայլիլում էր սատղերի ցոլքից: Յոլքերից մէկը կը լոյթ թէ թողեց իր տեղը և շարժելով մակերեսոյթի վրայ, թւաց թէ թողեց իր տեղը և աշխատ կամ վայլուն ելք ստացաւ, որ նրա լոյսը դուրս եկաւ և աշխատ վայլուն ելք ստացաւ, որ նրա լոյսը կուրացնում էր իմ աշքերը. նա մօտեցաւ ինձ և կանգնեց իմ կուրացնում էր իմ աշքերը. նա ընկայ երեսի վրայ և ծածկեցի երեսս. զլիս վերև շատ մօտ: Ես ընկայ երեսի վրայ և ծածկեցի երեսս. զլիս վերև շատ մօտ: Ես ընկայ երեսի վրայ և ծածկեցի երեսս. զլիս վերև շատ մօտ:

կողսերից, դու կը տեսնես Փրկչին և վկայ կը լինես նրա երեւալուն. վեր կաց առաւօտեան և գնա նոցա հանդէպ. և երբ համեմեք երուսաղէմի դոների մօտ, հարցրէք. «որտեղ է հրէից ծնած թագաւորը, որովհետեւ մենք տեսանք նրա աստղը և եկամք երկրագելու նրան» հաւատացիր սուրբ հոգու և նա քեզ կառաջնորդի: Ես այլ ևս չեմ կասկածում, որովհետեւ ինձ լուսաւորող լոյսը առաջնորդում էր ինձ: Առաջնորդուելով նրանով, ես իջայ Մեմֆիս, որտեղ պատրաստւեցի անապատից անցնելու համար. գնեցի մի սպիտակ ուղու, ճանապարհ ընկայ. անցայ Սուէզը, Մովաբացոց և Ամոնացոց երկիրները և ահա հանդիպեցինք միմեանց: Արդէն ձեզ ասացի, որ ես տեսնում եմ մի մեծ միտք մեր բոլորի պատմութեան մէջ. նա որին մենք կոչւած ենք երկրագելու, կոչւում է հրէաների թագաւոր. մեղ հրամայւած է գտնել նրան, այդ անունով: Երբ արդէն հանդիպեցինք, լոեցինք միմեանց, մենք կը ճանաչենք և նրան որպէս փըրկիչ ոչ թէ հրէաների համար միայն, այլ բոլոր ժողովուրդների: Երբ մենք կը գտնենք նրան, ամեն մէկը մեզանից վերագառնալով հայրենիք, աշխարհը մեր միջոցով կը ճանաչի մի նոր ճշմարտութեան, որ յաւիտենականութիւն վաստակելը կը լինի ոչ թէ սրով, այլ հաւատով, սիրով և բարի գործերով:

Բաղդասարը վերջացրեց իր խօսքը. տիրեց խորին լուսաթիւն. նոքա ամենքը զարմացած էին իրանց, երեքին էլ, աստծու յայտնութեան վրայ:

Քիչ յետոյ, վերկացան, դուրս եկան վրանից. լուսաթիւնը առաջւայ նման թագաւորում էր անապատում. երկնքում արել արդէն մայր էր մտնում. ուղտերը քնած էին: Նոքա վրանը քանդեցին, առաջւայ նման տեղաւորեցին և այժմ երեքով միասին ճանապարհ ընկան գէպ արևմուտք: Յուրա գիշեր էր: Ուղտերը հանգիստ կերպով գնում էին սիմեանց հետեկից: Լուս էին տէրերը: Շուտով դուրս եկաւ լուսինը և այդ երեք բարձր և սպիտակ մարմինները, սակայն լուս, առաջ էին գնում. լուսնի լոյսի տակ նոքա նման էին անապատում ուրւականների, որ կարծես փախչում էին խաւարից: Յանկարծ, նոցա առաջ, լեռան յետեկից, երեաց փայլիլացող մի լոյս. նոցա աչքերը փայլեց տեսնելով այդ լոյսը, սրտերը թրփրտաց և երեքն էլ միասին ուրախ գոչեցին.

— Աստղը... աստղը. Ասաւած մեղ հետ է. առաջ, առաջ...



Մ ս ի ւ վ ո ւ մ ե ն

1. „Краткій очеркъ розвитія горнаго
дѣла на Кавказѣ“. Յով. Կարպակետեսիլ » 30 լ.
2. Երեք Մոգեր փոխադր. » » 10 լ.

Մ ս մ ո ւ յ ի ս ա լ ե ն

1. Քրիստոֆօր Կարա-Մուրզայի
կենսագր. (պատկեր.) » » 50 լ.
2. «Գենաց ջուր» (Հնդկ. լեզ.) փոխ. » » 5 լ.

Պատրաս է սպազրութեան

„Артистъ“—Շիրվանզադէի, Թարդ, Բայհը, » »

Դիմել գրավաճառանոցներին:



1000W